Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Գագիկ Գրիգորյան,

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ,

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ղրղզստանի Հանրապետություն, քաղաք Չոլպոն-Աթա, 2017թ. օգոստոսի 4-ից 5-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրասիական տնտեսական միություն և Ղրղզստանի Հանրապետության տրանսպորտի և ճանապարհների նախարարություն:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 8-րդ խորհրդակցությանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են, ավտոմոբիլային, ջրային և երկաթուղային տրանսպորտի համակարգված տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականցման միջոցառումների ծրագրի նախագծերը (ճանապարհային քարտեզ):

Նիստի արդյունքում հավանության արժանացավ 2018-2020թթ.-ի համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականցման միջոցառումների ծրագիրը (ճանապարհային քարտեզը), և որոշվեց այն սահմանված կարգով ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի քննարկմանը:

Քննարկումների արդյունքում ընդհանուր համաձայնություն է ձեռք բերվել ճանապարհային քարտեզի ավտոմոբիլային տրանսպորտի մասով, որը առնչվում է ծանրաքարշ և մեծ եզրաչափով տրանսպորտային միջոցների փոխադրմանը ներկայացվող միասնական պահանջների սահմանմանը:

Քննարկվել է տրանսպորտի բնագավառում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների իրավասու մարմինների ղեկավարների խորհրդի ստեղծման հարցը, որը կաջակցի միությունում անդամ պետությունների կողմից տրանսպորտային համակարգված (համաձայնեցված) քաղաքականության իրականացմանը:

Համաձայան պայմանավորվածության մինչև 2017թ. սեպտեմբերի 15-ը անդամ պետությունները պետք է քննարկեն և Եվրասիական տնտեսական միության տրանսպորտի դեպարտամենտ ներկայացնեն դիրքորոշում՝ ղեկավարների խորհրդի դրույթների նախագծի վերաբերյալ:

Ռուսական կողմը առաջարկել է Եվրասիական տնտեսական միության շրջանակներից դուրս ստեղծել անկախ մարմին՝ ավիացիոն պատահարների քննության նպատակով:

Ղազախական կողմը իր հետաքրքրությունն է հայտնել մասնակցելու մարմնի ստեղծման գործընթացին:

Առաջարկվեց Ռուսաստանի Դաշնության կառավարությանը երկշաբաթյա ժամկետում դիմել անդամ պետությունների կառավարություններին՝ ներկայացնելով ավիացիոն պատահարների քննության միջազգային անկախ մարմնի և համապատասխան աշխատանքային խմբի ստեղծման վերաբերյալ առաջարկները:

Քննարկվել է «Եվրասիական շաբաթ» ֆորումի նախապատրաստական աշխատանքները: Հաշվի առնելով ֆորումի օրակարգը և քննարկվող հարցերի արդիականությունը՝ կարևորվել է անդամ պետությունների տրանսպորտի բնագավառի ղեկավարների մասնակցությունը: Հավանության արժանացավ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տրանսպորտի նախարարին 2017թ.-ի դեկտեմբերին ք. Մոսկվա Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի բնագավառի ղեկավարների հերթական խորհրդակցությանը հրավիրելու հարցը, որտեղ պետք է քննարկվի Եվրասիական տնտեսական միության և Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու տրանսպորտի և ենթակառուցվածքների բնագավառի գերակա նախագծերի ցանկը: Նշյալ ցանկում Հայաստանի Հանրապետությունը առաջարկել է ներառել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի» շրջանակներում նախատեսված և առայժմ չիրականացված մասը, ինչպես նաև «Հարավային երկաթուղու» կառուցման հարցը:

Քննարկվել է նաև Ղազախստանի Հանրապետությունից դեպի Ղրղզստանի Հանրապետություն երկաթուղային տրանսպորևտով տարանցիկ փոխադրումների սակագների հարցը: Արդյունքում որոշվել է հարցը քննարկել երկաթուղային տրանսպորտի ենթակոմիտեի հերթական նիստի շրջանակներում:

♦ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Նիստի արդյունքում ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 8-րդ խորհրդակցության արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունների արձանագրային որոշումները (կցվում է):

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միջոցառումների շրջանակներում հանդիպումներ են կայացել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար - կոլեգիայի անդամ Ա. Ժունուսովի, Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մ. Սոկոլովի, Ղրղստանի Հանրապետության տրանսպորտի և ճանապարհների նախարար Ժ. Կալիլովի, Բելառուսի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարի տեղակալ Ա. Լյախնովիչի և Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարության ներկայացուցիչ Տ. Լաստայեվի հետ:

,

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Գրիգորյան
08.08.2017թ.